Հավելված 8
ՀՀ գիտության կոմիտեի
գլխավոր քարտուղարի
2020 թ. հուլիսի 14-ի N 45-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՎԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԵՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Հայաստանի Հանրապետության գիտությանկոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) գիտության քաղաքականությանվարչության (այսուհետ՝ Վարչություն) գիտական մշակումների պատվերի ձևավորման և ինովացիոն ծրագրերի բաժնի(այսուհետ՝ Բաժին) ավագ մասնագետ (ծածկագիր՝ 18-1-27.1-Մ4-2)

1.2 Ենթակա և հաշվետու է

Բաժնի ավագ մասնագետը անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում էԲաժնի գլխավոր մասնագետը

1.4 Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան, Օրբելի եղբայրների 22

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

- մասնակցում է գիտական մշակումների պատվերի ձևավորմանն ուղղված մեխանիզմների մշակման աշխատանքներին.
- մասնակցում է տնտեսության կարիքների բավարարմանն ուղղված կիրառական նշանակություն ունեցող գիտահետազոտական աշխատանքներին և տեխնոլոգիական գործընթացներին աջակցության աշխատանքներին.
- մասնակցում է գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերի իրականացմանն աջակցության աշխատանքներին.
- մասնակցում է նոր կամ կատարելագործված արտադրանքի (կամ ծառայության) ստեղծմանն ուղղված գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքների իրականացմանն աջակցության, գիտական հետազոտությունների ու մշակումների արդյունքների առևտրայնացման և տնտեսության մեջ ներդրման մեխանիզմների մշակմանը.
- մասնակցում է գիտաինովացիոն ենթակառուցվածքի ձևավորման և զարգացման վերաբերյալ ծրագրերի մշակմանը, այդ թվում՝ ինովացիոն բնագավառի համար անհրաժեշտ

մասնագետների պատրաստման ու վերապատրաստման վերաբերյալ առաջարկությունների մշակման աշխատանքներին.

- մասնակցում է գիտության համակարգի գործունեության որակի և արդյունավետության մշտադիտարկման իրականացմանը.
- մասնակցում է կիրառական ուղղվածության գիտահետազոտական, գիտատեխնոլոգիական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը նպաստող ծրագրերի մշակման աշխատանքներին.
- մասնակցում է առևտրայնացման ներուժ ունեցող հետազոտությունների և մշակումների վերաբերյալ տվյալների հավաքագրման, համապատասխան շտեմարանի ստեղծման և վարման աշխատանքներին.
- մասնակցում է ինովացիոն քաղաքականության բնագավառում միջազգային համագործակցության ծրագրերի մշակման ու իրականացման կազմակերպման աշխատանքներին:

Իրավունքները՝

- պետական կառավարման մարմիններից, գերատեսչություններից, գիտական կազմակերպություններից, բուհերից և տնտեսության մասնավոր հատվածից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր.
- մասնակցել գիտական մշակումների պատվերի ձևավորմանն ուղղված մեխանիզմների մշակմանը, աջակցել գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերի իրականացմանը.
- մասնակցել գիտական թեմաների ընտրության, աջակցության մրցույթների կազմակերպմանը, գիտական հետազոտությունների ու մշակումների արդյունքների առևտրայնացման ու տնտեսության մեջ ներդրման մեխանիզմների, գիտական կամ գիտատեխնիկական կազմակերպություններում ինովացիոն ենթակառուցվածքների կազմավորման ծրագրերի մշակման աշխատանքներին.
- գիտության համակարգի գործունեության որակի և արդյունավետության մշտադիտարկման աշխատանքներ իրականացնելիս պահանջել ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկատվություն (այդ թվում՝ ֆինանսական).
- մասնակցել ինովացիոն քաղաքականության բնագավառում միջազգային համագործակցության ծրագրերի մշակման և իրականացման, միջազգային գիտաժողովների, սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպման աշխատանքներին.
- նախապատրաստել Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող առաջարկություններ, եզրակացություններ, փաստաթղթեր, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ, ինչպես նաև մասնակցել դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցերի մշակման աշխատանքներին:

Պարտականությունները՝

- գիտական մշակումների պատվերի ձևավորման, գիտական և գիտատեխնիկական

պետական նպատակային ծրագրերի իրականացմանն աջակցության, գիտական և տեխնոլոգիական մշակումների ոչ պետական հատվածի պատվերի ձևավորման մեխանիզմների վերաբերյալ ուսումնասիրությունների կատարման և առաջարկությունների մշակման աշխատանքների շրջանակներում կատարել տվյալների հավաքագրում և վերլուծություն, անհրաժեշտության դեպքում իրավական ակտերի նախագծերի մշակում՝ իրենց հիմնավորումներով և համապատասխան տեղեկանքներով, մասնակցել հանրային քննարկումների կազմակերպման աշխատանքներին, ստացված կարծիքների ու առաջարկությունների ամփոփում և դրանք Բաժնի պետին ներկայացում.

- գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման շրջանակներում տնտեսության կարիքների բավարարմանն ուղղված կիրառական նշանակություն ունեցող գիտահետազոտական աշխատանքների և տեխնոլոգիական գործընթացների, նոր կամ կատարելագործված արտադրանքի (կամ ծառայության) ստեղծմանն ուղղված գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքների իրականացմանն աջակցության, տնտեսության մասնավոր հատվածի հետ համաֆինանսավորման սկզբունքով կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական թեմաների ընտրության մրցույթների անցկացման շրջանակներում կատարել համապատասխան մրցույթների հրավերի փաթեթի հրապարակումը Կոմիտեի պաշտոնական կայքէջում, հետազոտական խմբերին և խմբերի ղեկավարներին խորհրդատվության տրամադրումը, հայտերի ընդունումը, ուսումնասիրությունը, վերլուծությունը, փորձաքննության ներկայացումը, շտեմարանների ստեղծումը, ընտրված մասնակիցների հետ պայմանագրերի կնքման նախապատրաստումը և Բաժնի պետին ներկայացումը.
- Բաժնի կողմից գիտության համակարգի գործունեության որակի և արդյունավետության մշտադիտարկման իրականացման մասնակցության աշխատանքների գործընթացում կատարել ծրագրի/թեմայի կատարման ընթացքի, ձեռքբերված գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունքների, ֆինանսական միջոցների օգտագործման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն, հավաքագրված տվյալների և դրանց վերլուծության հիման վրա մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ ամփոփ տեղեկանքի կազմում, բացահայտված խնդիրների կարգավորման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների և ցուցումների մշակում ու ծրագրի/թեմայի ղեկավարին տրամադրում, մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ շտեմարանի վարում.
- այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից սահմանված կարգով առևտրայնացման ներուժ ունեցող հետազոտությունների և մշակումների վերաբերյալ տվյալների հետ կապված գործընթացում հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվության և նյութեր, կատարել վերլուծության շտեմարանների ստեղծման, վարման և թարմացման աշխատանքներ.
- գիտաինովացիոն ենթակառուցվածքի ձևավորման և զարգացման վերաբերյալ ծրագրերի մշակման, այդ թվում՝ ինովացիոն բնագավառի համար անհրաժեշտ մասնագետների պատրաստման ու վերապատրաստման վերաբերյալ առաջարկությունների մշակման շրջանակներում կատարել ուսումնասիրություններ, հավաքագրել տվյալներ, վերլուծել, մշակել առաջարկություններ, նախապատրաստել նախագծեր՝ իրենց հիմնավորումներով և համապատասխան տեղեկանքներով, մասնակցել հանրային քննարկումների կազմակերպման

աշխատանքներին, ստացված կարծիքները ու առաջարկությունները ամփոփել և դրանք ներկայացնել Բաժնի պետին.

- ինովացիոն քաղաքականության ոլորտում միջազգային համագործակցության ծրագրերի և միջազգային ասպարեզում ինովացիոն բնույթի գիտատեխնիկական մշակումների ու նոր տեխնոլոգիաների ներկայացմանն ուղղված աշխատանքների համար ուսումնասիրել և վերլուծել միջազգային փորձը, անել առաջարկություններ միջազգային կազմակերպությունների հետ ինովացիոն ոլորտում համագործակցության համար, մասնակցել գիտաժողովների,լ սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպման աշխատանքներին:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն.

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաները՝

1. Փոփոխությունների կառավարում
2. Ժամանակի կառավարում
3. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և մասնագիտական օժանդակության համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և մասնագիտական օժանդակության շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի

մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: